

# ԽՈՍՔ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ

Յոթ Խոսք Խաչի Վրայից  
Մաս 5

«Մրանից հետո Հիսուսն իմանալով, որ ամեն բան արդեն լրացած է, որպեսզի գրվածը կատարվի՝ ասեց. Ծարավ եմ: Եվ մի աման կար քացախով լիքն. և նրանք մի սպունգ լցրին քացախով և զոպայի մշտիկի վրա դրած նրա բերանին մոտեցրին:» Հովհաննես 19:28-29

## Երեք Տեսակ Ծարավ

### 1. Հիսուսի ծարավը

- Նա իրական մարդ էր

«Որ Աստծո կերպարանքումը լինելով, հափշտակություն չհամարեց Աստծուն հավասար լինել: Այլ իր անձն ունայնացրեց, և ծառայի կերպարանք առնելով՝ մարդկանց նման լինելով և կերպարանքով մարդի պես գտնվելով:» Փիլիպպեցիս 2:6-8

- Նա իրական խոստացված փրկիչն էր

«Ծարավությանս մեջ քացախ են խմեցնում ինձ:» Մաղմուս 69:21  
«Եվ զոպայի փունջ առեք, և կոնքի մեջ եղած արյունովը թաթախեցեք և կոնքի մեջ եղած արյունիցը քսեցեք դռան վրայի սեւին՝ և երկու դրանդիներին, և մինչև առավոտ ձեզանից մեկն իր տան դռնիցը դուրս չգա:» Ելից 12:22

- Ինչքա՞ն է Հիսուսը մեզ սիրում իրականում

«Բայց Աստված հայտնեց իր սերը դեպի մեզ, որ՝ երբոր մենք դեռ մեղավոր էինք՝ Քրիստոսը մեզ համար մեռավ:» Հռովմայեցիս 5:8

### 2. Մյուսների ծարավը

«Ահա օրեր են գալիս, ասում է Տեր Եհովան, որ սով պիտի ուղարկեմ երկրի վրա, ոչ թե հացի սով և ոչ ջրի ծարավ, այլ Տիրոջ խոսքը լսելու: Եվ պիտի թափառեն ծովից մինչև ծով և հույսիսից մինչև արևելք, և նրանք պիտի ման գան Տիրոջ խոսքը որոնելու համար, և պիտի չգտնեն: Այն օրը պիտի նվաղեն գեղեցիկ կույսերը և երիտասարդները ծարավով:» Ամովս 8:11-13

- Ուրիշներին ծառայելով ես ծառայում եմ Հիսուսին

«Տե՛ր, ե՛րբ տեսանք քեզ սոված, և կերակրեցինք, կամ ծարավ, և խմեցրեցինք...թագավորն էլ կպատասխանի և կասի նրանց. ճշմարիտ ասում եմ ձեզ, որովհետև այս իմ փոքր եղբայրներից մեկին արիք, ինձ արիք:» Մատթեոս 25:37-40

- Հիսուսը գնահատում է անգամ փոքրագույն ծառայությունը

«Եվ ով որ այս փոքրներից մեկին միայն մի անգամ ցուրտ ջուր խմեցնի աշակերտի անունով, ճշմարիտ ասում եմ ձեզ, նա չի կորցնել իր վարձքը:» Մատթեոս 10:42

- Ամենամոտ Հիսուսի ծառայությանը՝ թշնամիներին ծառայելն է

«Եթե թշնամիտ սոված է՝ հաց տուր նրան, և եթե ծարավ է՝ ջուր խմեցրու նրան:» Առակաց 25:21

### 3. Իմ ծարավը

- Գիտակցել թե իրականում ինչի եմ ծարավ ես

«Ով Աստված, դու ես իմ Աստվածը. առավոտանց քեզ եմ ման գալիս. հոգիս ծարավ է քեզ համար. մարմինս քեզ է ցանկանում ցամակ և ծարավ երկրում, ուր որ ջուր չկա:» Մաղմուս 63:1

«Երանի նրանց, որ սոված և ծարավ են արդարության, որ նրանք կկշտանան:» Մատթեոս 5:6

- Գիտակցել, որ Հիսուսը հասկանում է իմ ցավը

«Հիրավի՛ նա մեր ցավերը վեր առավ, և մեր վիշտերը բռնեց իր վրա, բայց մենք նրան պատուհարված էինք համարում, Աստվածանից զարկված և նկուն եղած: Բայց նա մեր մեղքերի համար վիրավորվեցավ, և մեր անօրենությունների համար հարվածվեցավ, մեր խաղաղատության պատիժը նրա վրա եղավ, և նրա վերքերովը մենք բժշկվեցանք:» Եսայիա 53:4-5

«Որովհետև ոչ թե այնպիսի քահանայապետ ունենք որ չկարողանա մեր տկարություններին հետ կերակից լինել. այլ մի այնպիսին, որ ամեն բանով փորձված նմանությամբ, բայց առանց մեղքի:» Եբրայեցիս 4:15

- Դադարել բավարարվածություն փնտրել ուրիշ տեղ

«Որովհետև իմ ժողովուրդը կրկնապատիկ չարություն գործեց, ինձ՝ կենաց ջրի աղբյուրս՝ թողեցին որ իրանց համար հորեր փորեն՝ ծակծակոտ հորեր, որոնք չեն կարող ջուրը պահել:» Երեմիա 2:13

«Եվ տոնի վերջին մեծ օրումը Հիսուսը կանգնած էր, աղաղակեց և ասեց. Եթե մեկը ծարավ է, թող ինձ մոտ գա, և խմի: Ինձ հավատացողը, ինչպես գիրքն ասում է, Նրա փորիցը կենդանի ջրերի գետեր կբղխի:» Հովհաննես 7:37-38

«Հիսուսը պատասխանեց և ասեց նրան, Ամեն այդ ջրիցը խմողը դարձյալ կծարավի. բայց ով որ խմի այն ջրիցը որ ես կտամ նրան, նա հավիտյան չի ծարավել: Այլ այն ջուրը, որ ես կտամ նրան, ջրի աղբյուր կլինի նրանում, որ հավիտենական կյանքի համար կբղխի:» Հովհաննես 4:13-14

Հաջորդ Կիրակի  
ՀԱՂԹԱՆԱԿԻ ԽՈՍՔ  
Սարո Խաչիկեան